ՄԵՐԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ճարտարապետ

ՎԱՆՔԵՐ. ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Վանքերը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեւոր կառույցները, ձեւավորվել են Առաքելական Սուրբ Եկեղեցու ակունքներում: Եղել են կառույցներ, ուր ապրել եւ ստեղծագործել են հոգեւորականները: Այստեղ գործել են դպրատներ, կրթական համալիրներ, համալսարաններ: Ներկայիս կերպարը ստացել են տարբեր դարերում կառուցված եկեղեցիներով, գավիթներով, սեղանատներով, դպրատներով եւ օժանդակ կառույցներով:

Վանքը, որը մի քանի կառույցներից եւ տարբեր բակերից կազմված համալիր էր, ուներ իր ռեժիմը: Աշխարհիկ մարդկանց մուտքը վանք թույլատրվում էր միայն կիրակի օրերին, մյուս օրերին վանքի մուտքը փակ էր ոչ յուրայինների առջեւ:

Հայ Առաքելական Եկեղեցու վանքերը հիմնականում գործել են մինչեւ անցած դարի քսանական թվականների վերջերը: Համայնավարական կարգերի հաստատումից հետո այդ կառույցների գործունեությունը արգելվեց: Գործող մնացին եզակի վանքեր՝ Մայրավանքը, Գեղարդավանքը, Խոր Վիրապը:

Մայրավանքը կաթողիկոսանիստ է եւ առավել հայտնի որպես Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւոր կենտրոն: Մնացած վանքերը մատնվեցին անգործության եւ պեղտության կողմից ճանաչվեցին որպես «հուշարձաններ», պատմության եւ մշակութային արժեքներ: Արգելելով վանքերի գործունեությունը՝ փաստորեն ոչ միայն արգելվեց վանքում հոգեւոր կյանքը, այլեւ վանքային համալիրի կառույցները դատապարտվեցին բնության, իհարկե նաեւ մարդկանց քմահաճույքներին:

Ինչ փվեց նման որոշումը Հայ Եկեղեցուն: Այն, որ կործանման եզրին կանգնեցին վանական եւ անապատական կյանքը եւ այնտեղ գտնվող համապատասխան շինությունները:

Արդեն անցյալ դարի հիսունական թվականներից սկսած բնության գեղատեսիլ վայրերում տեղավորված վանքերը դարձան զբոսաշրջության եւ հիմնականում անտերության մատնված վայրեր:

Վանք այցելած մարդկանց հիմնական գործառույթն էր այնտեղ մատաղ անել, կեղտոտել, կենդանիների մնացորդներով տարածքը «հարստացնել», կոտրել եւ որպես խարույկի քարեր օգտագործել ճարտարապետական բեկորները, խարույկի ածուխներով պատերի վրա իրենց անունները գրել:

Այսպիսով, մարդկանց մտքում եւ հոգում հիսուն տարվա ընթացքում վանքերը ասոցացվեցին որպես էկզոտիկ կառույցներ բնության գրկում, ուր տարբեր մարդիկ ստանում էին իրենց ինտելեկտին համապատասխան բավարարվածություն՝ այցելելով վանք: Այդ պատճառով ոչնչացվեց նաեւ հոգեւոր կառույցների նկատմամբ մինչ այդ եղած հատուկ եւ ակնածական վերաբերմունքը: Անգամ ճարտարապետներ, որոնք ներկայացնում էին հոգեւոր կառույցների պատմությունը եւ ճարտարապետությունը, չէին խորանում հոգեւոր կառույցների առանձնահատկությունների մեջ, այսօր եւս չեն զանազանում հոգեւոր- կառույցների տիպերը՝ դամբարանները խառնում են զանգակատների հետ, վերջին օծման եկեղեցիները շփոթում գործող եկեղեցիների հետ: Ցավալի է, սակայն փաստ, որ պետության կողմից հոգեւոր-պատմամշակութային հուշարձաններ ճանաչված կառույցները մինչ այսօր լիարժեք չեն ուսումնասիրված եւ տիպաբանված:

Տապանաքար-խաչքարերը դարձան հափշտակման առարկաներ, որոնք իրենց տեղերից այսօր եւս տեղահանվում են, սրբապղծվում են նախնիների շիրիմները եւ տեղադրվում են անհատների բակերում, անգամ տներում:

Հոգեւոր վակուումը հիմնական պատճառը հանդիսացավ արդեն իննսունականներին Հայաստան ներթափանցած աղանդների տարածման համար: Այդ աղանդները նաեւ համապատասխան ապաստան գտան այդ ժամանակաշրջանում իշխանավորական աթոռ ստացած շատերի հոգիներում, որը պատճառ դարձավ Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ որոշ անձանց ներկայիս անպատշաճ վերաբերմունքին: Հայ ժողովրդին վիճակված պատմական անարդարությունների երեքդարյա եւ համայնավարական յոթանասուն տարիների վանական կառույցների գործունեության դադարեցումը նպաստեցին, որ ոչ մի նոր վանք չկառուցվեց վերջին չորս հարյուր տարիների ընթացքում, ինչի արդյունքում վանական համալիրների զարգացման առաջընթաց չի գրանցվել:

Սա նույնպես վակուում է հոգեւոր նման կառույցի համար, ինչպիսին է վանքը:

Վերակենդանացնել վանքերի գործունեությունը մյուս բոլոր կարեւոր ձեռնարկումների հետ՝ իր առջեւ խնդիր դրեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Վանքերի գործունեության վերականգնումը կարեւոր, սակայն բազմաթիվ ածանցյալ խնդիրների հետ առնչվող եւ տարբեր լուծումներ պահանջող ծրագիր է: Վերականգնել վանքի հոգեւոր գործունեությունը նշանակում է՝

- վերականգնել վանքում հոգեւոր դասի ներկայությունը, որն իր հերթին պահանջում է համապատասխան կառույցների վերականգնում կամ, վերջիններիս հիմնահատակ կործանված լինելու պատճառով, նորերի կառուցում:

Սակայն վերջին հարյուրամյակների ընթացքում վանական համալիրներում նոր օժանդակ կառույցների բացակայությունը առաջադրում է տարբեր հարցեր, որոնք լուծում են պահանջում: Չէ որ համայնավարները վանքերի գործունեությունը դադարեցնելուց հետո չմտածեցին դրանց օգտագործման խնդիրների մասին, չմշակվեցին համապատասխան օրենք եւ նորմատիվ ակտեր: Միակ տարբերակը, որ առաջարկվում էր, վանքապատկան կառույցները դարձնել թանգարաններ կամ ռեստորաններ ու սրճարաններ, որոնք այդպես էլ չհասցրեցին իրականություն դարձնել:

Նոր իշխանությունները վանքերից շատերը Հայ Առաքելական Եկեղեցուն վերադարձրեցին, սակայն վանքերի օգտագործման խնդիրները հուշարձանների մասին օրենքում այդպես էլ անորոշ մնացին:

Հայկական ճարտարապետությունը հայ ժողովրդի սեփական հանճարի ծնունդն է, որի պահպանությունը դարեր շարունակ իրականացրել է Հայ Առաքելական Եկեղեցին, իսկ այժմ ՀՀ կառավարության հետ համատեղ իրականացնում է Եկեղեցին: Հայ արվեստի եւ գիտության առաջադիմության մղիչ ուժն են եղել հայ բարձրասրտիճան հոգեւորականների բեղմնավոր երեւակայությունը եւ ստեղծագործ միտքը: Ամենայն Հայոց Գարեգին Բ. Հայրապետը գահակալության առաջին իսկ օրվանից խոր հմտությամբ, կարեւոր գործի պատասխանատվությամբ, հանդուգն վստահությամբ ձեռնամուխ եղավ պատմամշակութային արժեք հանդիսացող մեր եկեղեցիների եւ վանքերի վերականգնմանն ու օգտագործմանը: Վանքերը դարձնել օգտագործվող, առաջին հերթին ապահովել դրանց պահպանությունը :

Վանքերը օգտագործելի դարձնել նշանակում է ներկա պայմաններին համապատասխան կառույցներ ունենալ հոգեւորականների համար:

Վերջին հարյուրամյակը մարդուն պարգեւել է էլեկտրական հոսանք, հեռախոս ինտերնետ կապ, համակարգիչ եւ կենցաղային բազմատեսակ սարքավորումներ:

Օժանդակ կառույցները, հոգեւորականների նախկին խցերը, երկուսը երեքի վրա տարածքներ ունեցող սենյակներ են հատ պատերով, որոնք միմյանց հետ կապված են բակի ճակատից, բաց նախասրահներով: Սենյակները փոքր պատուհաններով առանց կոմունալ հարմարությունների ու առանց օդափոխության միավորված են մեկ ընդհանուր հարթ տանիքի տակ, շատ հաճախ ամբողջ պարագծով շրջապատելով հոգեւոր կառույցները:

Օգտագործելի դարձնել այդ կառույցները ներկա պայմաններում, որպես հոգեւորականների կացարաններ՝ այժմ մեծ մասամբ հնարավոր չէ:

Պատճառները՝

- ոչ միշտ է հնարավոր նման պայմաններում ստեղծել օդափոխության համակարգ
- ստեղծել կոմունալ պայմաններ, սանհանգույց, լոգարան
- ջեռուցման համակարգ
- վերականգնել հարթ տանիքները հին տեխնոլոգիայով այնպես, որ դրանք չկաթեն:

Վերը նշված բոլոր փոփոխությունները իրականացնել նման օժանդակ շինություններում՝ նշանակում է կառուցվածքային եւ կերպարային մեծ փոփոխություններ կատարել այդ կառույցներում, փոփոխելով նաեւ շինարարական տեխնոլոգիան, հանգամանքներ, որոնք կհակասեն հուշարձանի պահպանման մասին օրենքին: Ուրեմն ինչպես օգտագործել՝ չխաթարելով վանական համալիրի կերպարը. օգտագործելով վանքը, որպես հոգեւորականների ծառայության եւ կեցության կառույցներ: Կառուցել երկրորդ բակը, հաշվի առնելով մեր նախնիների փորձը: Ինչու չէ, նաեւ երրորդ բակը, եթե երկրորդ բակը արդեն կա: Չէ, որ վանքերից շատերը ունենալու են կրթական համակառույցներ՝ դպրոցներ, ճեմարան, համալսարան: Նախկինում երկրորդ բակերը ծառայել են որպես տնտեսական կամ կեցության բակեր: Սակայն այս դեպքում առաջանում է հուշարձանապահպանման գոտու խնդիր, որը արգելում է պահպանման գոտում նոր կառույցների կառուցումը:

Ստացվում է, որ քսանմեկերորդ դարում մենք արգելք ենք դնում վանական համալիրների օգտագործմանն ու զարգացմանը՝ միաժամանակ վանքերը հանձնելով եկեղեցուն: Մի բան միանշանակ պարզ է, որ օրենքը՝ մշակված համայնավարական տարիներին եւ վերանայված նոր իշխանությունների օրոք, հաշվի չի առել վանքերի եւ եկեղեցիների օգտագործման ներկայիս առկա բոլոր խնդիրները, եւ մշակված ու հստակեցված չէ օրենքը այս կառույցների օգտագործման դեպքում:

Այս եւ այլ շատ խնդիրներ առկա են վանքապատկան օժանդակ կառույցների վերականգնման եւ օգտագործման պարագային:

Չնայած առկա բոլոր բարդություններին, այսօր առաջնահերթ է վանքերի օգտագործման խնդիրը: Մեզ ժառանգություն մնացած շինարարական կատարելությունները պահպանել եւ մեր գալիք սերունդներին անաղարտ հասցնել պատմամշակութային արժեքները՝ այսօր խնդիր է, որ փորձում է լուծել Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Մեր բազմաթիվ կաթողիկոսների պես, շինարարական հատկությունները



Հառիճավանք

Սեւանի Ս. Առաքելոց եւ Ս. Կարապետ եկեղեցիները

անկորուստ պահած մեր բարձրաստիճան հոգեւորականի բեղմնավոր շինարարական փորձը եւ ստեղծագործ միտքը, հմտությունը դարձան նոր կարեւոր ձեռնարկումների մղիչ ուժը :

Վերջին տասը տարիների ընթացքում վանական կյանքը վերակենդանացել է մի քանի վանքերում :

Առաջին վանքային համալիրը, որտեղ առաջնահերթ էր հոգեւորականների համար կացարանի կառուցումը՝ Մայրավանքն էր, մշտապես բոլոր ժամանակներում գործող վանքային համալիր Մայր Աթոռը: Տարածքում գոյություն ունեցող կացարանային շինություններից եւ ոչ մեկը չէր համապատասխանում ժամանակակից պահանջներին :

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի որոշմամբ Մայրավանքի հիմնական բակից դուրս կառուցվեց միաբանականների համար կացարանների նոր շենքը, որը բավարարում է ներկա բոլոր պայմանները:

Երկրորդ բակից դուրս անհրաժեշտություն էր տնտեսական բակի առկայությունը եւ համապատասխան կառույցը, որով ստեղծվեց երրորդ բակը: Ասել, թե հնում այդ բակերը չէին եղել, դրանք նոր ստեղծվեցին՝ սխալ կլինի, որովհետեւ մինչ կոմունիստական հասարակարգը, Մայր Աթոռն ընդգրկող տարածքները հանապատասխան կառույցներով շատ ավելին են եղել, քան այժմ:

Մայրվանքի տարածքը համալրվեց նաեւ ճեմարանի նոր մասնաշենքով՝ համապատասխան կրթական համալիրների նորմատիվ պահանջների: Այս Հատվածում կառուցվեց նաեւ Սուրբ Հրեշտակապետաց նոր մատուռ-եկեղեցին: Ուսումնական գոտուց հարավ կառուցվեց նաեւ գրադարան - մատենադարանի շենքը, որը կապահովի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պահպանվող մատյանների եւ գրքերի համար ժամանակակից պահպանման պայմաններ: Այսպիսով տեսնում ենք, որ վանքը շնչող եւ զարգացող համակարգ է, եւ կանգնեցնել վանքի զարգացման ընթացքը հնարավոր չէ:

Վերականգնման աշխատանքներ սկսեցին իրականացվել 2003-ից Խոր Վիրապի վանքային համալիրում: Վերականգնվել է համալիրի օժանդակ կառույցների հարավ- արեւելյան հատվածը, որը վերջին տասնամյակում արդեն վթարային վիճակում էր:

Վերականգնել Խոր Վիրապ վանքային համալիրի օժանդակ կառույցների պատերը իրենց առկա հին տեխնոլոգիայով, 1.5-2,5 մ հաստությամբ պատերով եւ միջուկների հողե լիցքով՝ առաջին հերթին հակասում էր գոյություն ունեցող քաղաքաշինական սեյսմիկ նորմերին, քանդել պատը, բարակացնել եւ կառուցել երկաթբետոնե միջուկներով՝ հակասում էր հուշարձանների մասին գոյություն ունեցող օրենքին:

Նախագիծը բազմաթիվ քննարկումներ անցավ ՀՀ մշակույթի նախարա-

ության գիտամեթոդական խորհրդում եւ վերջնական օպտիմալ լուծում ստացավ, որը ապահովեց պատի կայունությունը, ճարտարապետական կերպարը, պահպանվեց պատերի հաստությունը եւ շարվածքի տեսակը:

Վերականգնվեց մոտ մեկ դար արդեն խորհրդային կարգերի ջանքերով գործունեությունը դադարեցրած, կառույցները հողին հավասարեցված, Սեւանի դպրատունը: Սակայն ասել, թե ամբողջովին վերականգնվել է Սեւանի վանքային համալիրը, այսօր դեռ վաղ է: Վանքային կյանքի լիարժեք գործունեություն ապահովելու համար անհրաժեշտ նոր մի քանի շինությունների կառուցման պահանջ նույնպես կա:

Վանական համալիրների վերականգնման աշխատանքներն ընթանում են զուտ հուշարձանների մասին օրենքի սահմաններում, չնայած որ երբեմն-երբեմն հնչում են նաեւ քննադատական խոսքեր հուշարձանների վերականգնման եւ դրանց խնդիրներին անտեղյակ ոչ մասնագետ մարդիկանցից: Հեռու վերը նշված մասնագիտական խնդիրներից, առավել եւս առանց բազմակողմանի ուսումնասիրության, հապճեպ ոչ մասնագիտական կարծիքներ հայտնել վերականգնվող ճարտարապետական կառույցի ընթացիկ խնդիրների վերաբերյալ՝ շատ հաճախ հիմա իրենց են վերապահում ոլորտին չտիրապետող անձինք:

Խնդրին բավարար պատասխան ունենալու համար դարերում իրականացված բազմաթիվ վերականգնումների եւ շինարարական շրջանների մեջ վերականգնողը խորասուզվում է ծովացող խնդիրների առջեւ, գտնում ու գիտամեթոդական խորհրդի առջեւ դնում է կառույցի կյանքի ամբողջ պատմությունը, ներկայացնում վերականգնման հիմնական ճշմարիտ լուծումը եւ ստանում գիտակ մասնագետների հավաքական կարծիքը վերականգման նախագծի վերաբերյալ:

Դարերի ընթացքում պատմության մշակութային արժեքները բազմաթիվ վերականգնումներ են իրենց վրա կրել, փոփոխվել են ճարտարապետական ծավալատարածական լուծումները, ճարտարապետական ձեւերը՝ Մայր Տաճար, Տեկորի, Օձունի տաճարներ եւ ճարտարապետական այլ գլուխգործոցներ, որոնց նախնական կերպարների վերաբերյալ գիտնականները իրենց տարբերակներն են առաջարկում:

Իհարկե, հենց այս վերականգնումներն են, որ ապրեցրել եւ եկարատեւ կյանք են ընձեռել կառույցներին ու հազարամյակներ պահել եւ մեզ են փոխանցել այդ արժեքները՝հիանալու նրանցով եւ հպարտանալու: Վերականգնողների խնդիրն է եղել՝անմար պահել մշակույթի կանթեղը, որ մեզ է փոխանցված:

Վերականգնումը արվեստ է, կարեւոր մշակութային բնագավառ:

Առավել զարգացնելու եւ հարստացնելու համար բնագավառը՝Հայաստանի Հանրապետությունը մշակութային արժեքների պահպանման եւ վերականգն-

ման ասպարեզում այժմ համագործակցում է Հայ Առաքելական Եկեղեցու, մի շարք երկրների եւ միջազգային կազմակերպությունների հետ, ուսումնասիրում նրանց վերականգնողական գիտական եւ աշխատանքային փորձը:

Այդ նույն ուսումնասիրական եւ հետազոտական բոլոր ուղիներով ու փուլերով անցան նաեւ Հաղարծնի վանքային համալիրի նախագծման եւ վերականգնման աշխատանքները:

Հաղարծնի վանքային համալիրի պատմական եւ մշակութային արժեքի մասին շատ է խոսվել, բայց երբեք չի խոսվել թե ինչ ավերակ վիճակում են հայտնվել վանքի կառույցները անցած դարասկզբին, եւ վերջին հարյուրամյակի ընթացքում ինչ վերականգնողական աշխատանքներ են կատարվել:

Հաղարծնի վանքի տեսքը Ի. դարի սկզբին

Հաղարծնի վանքային համալիրը իր վրա կրում է դարերի ընթացիկ վերականգնումները: Վերջին վերականգնողական աշխատանքները վերաբերում են համայնավարության հիսունական թվականներին, հուշարձանը պահպանելու նպատակով, տանիքածածկերը թիթեղապատվել են, ջրերի ներթափանցումը հուշարձանի ներսը կանխելու համար: Վաթսունական թվականների վերջին

եւ յոթանասունականների սկզբներին վանքային համալիրի մի քանի կառույցներ մասնակի վերականգնվել են (շատ ճարտարապետական լուծումներ վերականգվել են ոչ ճիշտ), իսկ մի քանիսի վրա իրականացվել է քարե տանիքածածկ: Սխալ նորոգումներն իրենց պատճառներն են ունեցել՝ տարածքները ամբողջապես չեն պեղվել եւ մաքրվել, բոլոր փլատակները հիմնավոր ուսումնասիրության չեն ենթարկվել, պատճառը ֆինանսներն են, որ միշտ անբավարար են եղել:

Աննախադեպ են ներկայիս վանքային համալիրում Վեհափառ Հայրապետի կողմից իրականացվող վերականգնողական աշխատանքները:

Հայաստանում համայնավարական տարիներին եւ հիմա չկա գեթ մեկ վանքային համալիր, որը իր բոլոր կառույցներով ամբողջական վերականգնման ենթարկվի: Այդ բախտը ընձեռվել է Հաղարծնի վանքային համալիրին:

Մեր հասարակայնության համար կորած է վանք հասկացությունը: Մեկ հարյուրամյակ էր հարկավոր, որ մենք կորցնեինք մեր հոգեւոր կառույցների մասին հասկացողությունները: Չէ որ դանք մշակութային կենտրոններ են եղել, այնտեղ եղել է հոգեւոր կյանք, ուր ծնվել եւ զարգացել են մշակույթի շատ ճյուղեր: Ծատերիս համար այժմ կոմունիստական հասարակարգից մնացել է թյուր մի կարծիք, որ վանքերը զբոսաշրջության եւ զվարճանքի վայրեր են:

Բայց այլ է, երբ մենք ասում ենք, թե վանք ենք վերականգնում, մենք վերականգնում ենք վանքի գործունեությունը եւ հոգեւոր կայնքը վանքի տարածքում: Այդ առումով վերականգնվում են վանքի կյանքին անհրաժեշտ բոլոր գործառական կառույցները:

Վանքի վերականգնման աշխատանքները սկսվել են դեռեւս 2006-ից, երբ մի շարք ատյաններում երկարատեւ քննարկումների արդյունքում հաստատվեց Վանքի վերականգնման ծրագիրը: Այնուհետեւ հաստատվեց նախագծային առաջադրանքը:

Հաղարծնի վանքային համալիրի հիմնական բոլոր կառույցների համար կատարվեցին ուսումնասիրական, չափագրական եւ նախագծային աշխատանքներ: Ուսումնասիրվեցին բոլոր դիվանական նյութերը՝ չափագրություններ, լուսանկարեր, նախագծեր, հաստատման ներկայացվեց վերականգնման այս նախագիծը: Նախագծի այս փուլը մի քանի անգամ քննարկվել է մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդում, եւ միայն հավանության արժանանալուց հետո իրականացվել է նախագծի աշխատանքային փուլը: Վերականգնողական աշխատանքները սկսվել են 2008-ին:

Վերականգնման աշխատանքների ընթացքին պարտադիր կարգով եւ հետեւողականորեն իրենց մասնակցությունն են բերել նախագծի հեղինակը, տեխնիկական հսկիչը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական բաժինը՝ ծրագրի ղեկավարի եւ գլխավոր ճարտարապետի հետ միասին: Հսկողութ-

յուն են իրականացրել մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության գործակալությունը, հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը, հասարակական կազմակերպություններ՝ ազգային խորհուրդը, ճարտարապետների միությունը, Հուշարձանների պահպանության եւ վերականգնման ընկերակցությունը: Արտագնա նիստերով եւ մոնիթորինգով հայտնել են իրենց դրական կարծիքները վերականգնողական աշխատանքների որակի վերաբերյալ: Վերականգնման աշխատանքները միշտ լի են անակնկալներով: Նման անակնկալ մատուցեցին նաեւ Սուրբ Աստվածածին եկեղեցու հատակի վերականգնողական աշխատանքները, որոնց ընթացքում բացվեց բավական մեծ հոր, որի պատերը շարված էին կոպտատաշ քարերով: Նորահայտ հորի ուսումնասիրության համար կազմվեց հանձնախումբ համապատասխան մասնագետների մասնակցությամբ, ուսումնասիրությունները կատարվեցին եւ տրվեց եզակացություն:

Հաղարծնի վանքը վերանորոգումից հետո

Վերջին քսան տարիների ընթացքում ոչ մի հուշարձանի վերականգնման եւ աշխատանքային փուլ նման հսկողության չի արժանացել տարբեր կազմակերպությունների կողմից, ինչպիսին եղել է Հաղարծնի վանքի վերականգնողական աշխատանքների ընթացքում: Արդյունքում փայլուն կերպով ավարտին են մոտենում վերակնգնողական աշխատանքները: Աշխատանքներ են սկսվել փու

լերով Գեղարդավանքի օժանդակ կառույցների ուսումնասիրական եւ վերականգնման աշխատանքներում:

Գեղարդավանքի օժանդակ կառույցները իրենց պահպանվածության աստիճանով, հիմնականում վթարային էին: Կոպտատաշ պատերով եւ հողե լիցքով պատերի եւ թաղերի գլխին անցած դարի 70-ականներին կատարվել են վերականողական աշխատանքներ, ցեմենտ-ավազե լիցքով հարթ հողե տանիքների վրա տեղադրվել էին տուֆե ծածկասալեր: Կատարված վերականգնումը ոչ թե պահպանել, այլ քայքայել էր հուշարձանը, տուֆե ծածկասալերից ներթափանցած ջրերը ողողել էին կառույցի պատերը եւ թաղերը: Պատերը թեքվել էին ուղղաձիգ առանցքից, որոշ հատվածներում փլուզվել, եւ մյուսներին էլ սպառնում էր փլուզում: Այս օժանդակ կառույցները ոչ միայն չէին կարող ծառայել որպես բնակելի կացարաններ հոգեւորականների համար, այլեւ չունեին օգտագործման համար ոչ մի նպաստավոր պայման: Հողե եւ տուֆե քարերով խոնավ հատակները, առանց էլեկտրական հոսանքի եւ ջեռուցման, փոքր սենյակների խարխլված, եւ ջրով հագեցած պատերն ու թաղերը ամեն րոպե սպառնում էին փլուզվել:

Վանքի հյուսիսային պարսպապատը բավական լայն եւ խոշարաձավալ քարերով ուղաձիգ առանցքից շեղվել եւ կախվել էր ժայռափոր կառույցների վրա, ամեն րոպե վտանգելով վերջիններիս գոյությունը: 2005-ից սկսվեց վթարային հատվածների վերականգնողական աշխատանքների նախագծային փուլը, հավանության արժանանալուց հետո միայն սկսվեցին վերականգնողական աշխատանքները:

Այժմ շարունակվում են օժանդակ կառույցների մյուս հատվածների ուսումնասիրական եւ հետազոտական աշխատանքները :

Գեղարդավանքը ոչ միայն հայ ժողովրդի մշակութային արժեքն է, այլեւ որպես բնության եւ մշակութային արժեք մուծվել է Յունեսկո-ի ցանկ:

Վեհափառ Հայրապետի ջանքերը այժմ ուղղված են նաեւ վանքի շրջակա բնության անխաթար պահպանման խնդիրներին:

Ում արդյոք ծանոթ չէ վանքի շրջակա տարածքի վիճակը ուխտավորների եւ բազմաթիվ այցելուների ու խմբերի այցելություններից հետո, երբ շրջակա տարածքը հագենում էր կերակուրների մնացորդներով: Այժմ խնդիր է այստեղ այցելողների հանգստի կազմակերպումը, որպեսզի պահպանվի ու անաղարտ մնա բնությունը: Այս եւ նմանատիպ այլ խնդիրներ դարձել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ՀՀ մշակույթի նախարարության համատեղ ուսումնասիրությունների եւ հետազոտական աշխատանքների առարկան:

Վերջին տարիների ընթացքում մասնագետներն արել են մի շարք առաջարկներ, որոնք քննարկվել են ՀՀ մշակույթի նախարարությունում եւ Մայր

Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական խորհրդում: Սակայն լուծումների նկատմամբ առկա տարաձայնությունները վերջնական տարբերակ դեռեւս չեն հաստատել :

2006 թ. սկսվել են նաեւ Հառիճավանքի օժանդակ կառույցների վերականգնման աշխատանքները: Այս ծրագիրը նույնպես անցավ օրենքով սահմանված հաստատման բոլոր փուլերը եւ ստացավ վերականգնման թույլտվություն:

Ճիշտ է, վանքի օժանդակ կառույցների վերականգնման աշխատանքները սկսվել էին դեռեւս 1980-ական թվականներին, սակայն վանքի օգտագործման խնդիրը այն ժամանակ դրված էր այնպես, որ նրա հիմնական կառույցը՝ դպրատունը պետք էր օգտագործվեր որպես թանգարան: Վերականգնման աշխատանքներ կատարվել էին, վերցվել էր դպրատան ծպեղային լանջավոր տանիքը եւ փոխարենը իրականացվել էր քարե ծածկասալերով հարթ տանիքածածկ: Ներսում կատարվել էին նաեւ պատերի ու թաղերի հարդարման աշխատանքներ: Սակայն տանիքածածկույթի ոչ ճիշտ լուծում ստանալու պատճառով տասնամյակներ շարունակ մթնոլորտային տեղումներից ջրերը ներթափանցել էին պատերի եւ թաղերի մեջ: Դրանք այնքան գերհագեցած էին ջրերով, որ հարդարման աշխատանքները չէր հաջողվում իրականացնել: Միայն երեք տարի հարկավոր եղավ բորբոսնած եւ մամռակալած ներսի պատերի չորացման համար: Նախկին ձեւով վերականգնվեց լանջավոր տանիքածածկը, պատերը մաքրվեցին քայքայված գաջե սվաղից, դպրատունը հարմարեցվեց ժամանակակից պայմաններում գործող դպրատան, համակարգչային սենյակով, գրադարան-ընթերցասրահով, Ճաշարան-խոհանոցով: Վերականգնման ընթացքում է նաեւ հաղիսությունների դահլիճը եւ նախկին կաթողիկոսական ամառային նստավայր-վեհարանը: Ստեղծվել է վանքը գրունտային ջրերից զերծ պահելու դրենաժային համակարգ՝ վանքի արտաքին պարսպապատից դուրս հատվածում: Դրենաժային համակարգ է իրականացվել նաեւ վանքի ներսում՝ Սուրբ Աստվածածին եկեղեցու արեւելյան մասում՝ պատի տակ, ուր կուտակվում էին գյուղի թեքադիր փողոցներով հոսող ջրերը:

Նախատեսվում է սկսել վանքի երկրորդ բակում տեղավորված ննջարանային մասնաշենքերի վերականգնման եւ հոգեւորականների կացարանների վերականգնման աշխատանքները: Շուտով քննարկման կներկայացվի նաեւ հոգեւոր կառույցների վերականգնման եւ ամրակայման աշխատանքների փուլը :

Վերականգնվեցին նաեւ Գայանե, Հռիփսիմե վանքերի միաբանական կառույցները:

Վերականգնել վանքային համալիրի օժանդակ կառույցները, հարմարեցնելով հոգեւորականների ներկա պահանջներին՝ ոչ միշտ է հնարավոր թե նախ-

կին կառույցի հիմնահատակ կործանված լինելու, թե եղածների ոչ բարենպաստ պայմանների պատճառով: Սակայն, որ այսօր վանքերը պետք է գործեն որպես հոգեւոր կառույցներ իրենց համապատասխան նշանակությամբ, ունենան գործունեության նպաստավոր պայմաններ եւ զարգացում՝ անվիճելի է:

Ժամանակը չի կարող կանխել վանքերի զարգացման ընթացքը: Այսօր վերականգնվում եւ օգտագործվում են եկեղեցիները, որոնց զարգացման ընթացքը ունի հազարամյակի պատմություն, իսկ նոր եկեղեցիների ճարտարապետությունը փորձում է զարգացում ապրել: Ուստի վանքերի ճարտարապետական եւ հոգեւոր բնագավառը կարիք ունի նույնպես զարգացման:

Ժամանակը եւ տարածությունը հավերժական կատեգորիաներ են, որոնք անվերջ գտնվում են շարժման եւ զարգացման մեջ: Մարդը իր ստեղծագործություններով այդ ամենի անքակտելի մասն է: Ուստի նրա զարգացումը կարող է ժամանակավորապես դադարել կամ կանխարգելվել, բայց ամբողջ ընթացքը կանգնեցնել կամ դադարեցնել անհնար է: Ամեն մի ժամանակահատված ունի իր հոգեւոր հզոր մղիչ ուժը, որը գվյալ ժամանակահատվածում զարգացում է ապահովում: Նման հզոր շարժիչ ուժ է այսօր Վեհափառ Հայրապետը, որ ապահովում է հոգեւոր կյանքի եւ նրան անհրաժեշտ ատրիբուտների զարգացումը ներկա ժամանակահատվածում :